

Հայոց լեզու և գրականություն

Ա. Յ. ՍԱՐԳՍՅԱՆ (բզթ, ավագ դասախոս)
Շ. Մ. ՄԻՆԱՍՅԱՆ (բզթ, ասիստենտ-դասախոս)

ՄԻԱՅՆ ԴԱՐՉԱՎՃՆԵՐՈՒՄ ՊԱՅՊԱՆՎԱԾ ԴԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԻՆ ՀԱՏՈՒԿ
ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՌԱՉԵԿԵՐ

Ձարգացման անընդհատականությունը լեզվի անբաժանելի, մշտական և կայուն հատկանիշներից է: Խոսելով միայն դարձվածներում պահպանված բառերի ու բառածների մասին, պետք է նկատի առնել, որ լեզվական համակարգը զարգանում է անհավասարաչափ. լեզվական մի կարգի երևույթները որոշակի զարգացում են ապրում, այն դեպքում, երբ մի այլ կարգի երևույթներ մնում են անփոփոխ: Լեզվական համակարգի, այն կազմող միավորների զարգացման անհավասարաչափությունը երևան է գալիս գրական լեզվի և բարբառների համեմատության միջոցով: Դա նշանակում է, որ գրական լեզուն, տվյալ դեպքում գրական հայերենը և նրա բարբառները միասնաձայն արձագանքում լեզվական նորաբանությունների մտցման ու եղած ձևերի հնացման երևույթներին: Ինչպես հայտնի է, գրաբարյան պարառական (արտագոյական, շրջակայական) հոլովը, որը մի շարք բերականների կողմից ինքնուրույն հոլովածնի բացակայության պատճառով առանձին հոլով չի դիտվում, կազմվում է գ նախդիրի և գործիական հոլովի միջոցով: Գրաբարյան պարառական հոլովածնը պահպանվել է Ղարաբաղի բարբառում՝ *գիրաՎ* բառում (*գ+ինքն* դերանվան գործիական հոլով): Հետաքրքրականն այն է, որ *գիրաՎ* բառով կազմվող բոլոր կապակցությունները բնորոշվում են կայունության հատկանիշով, իսկ կայուն կապակցությունների գերակշռող մեծամասնությունը ունի դարձվածի արժեք՝ *գիրաՎ հընցնել* (տեսության գնալ), *գիրաՎ անել* (գբաղեցնել), *գիրաՎ ածել* (փաթաթել, ծածկել), *գիրաՎ ընգնել* (պատահական հանդիպել), *գիրաՎ օնել* (անուշադրության մատնել, արհամարհել) և այլն¹:

Այս կապակցություններում *գիրաՎ* բառը չի գիտակցվում որպես *ինքն* դերանվան պարառական հոլովածն, այսինքն առկա է հոլովածնի քարացած ձևով պահպանում և գործածություն, մի հանգամանք, որը նպաստել է նշյալ կայուն կապակցությունների դարձվածային արժեքի ձեռք բերմանը (այստեղ, անշուշտ, վճռորոշ դեր է խաղացել կապակցությունների փոխանվանաբար կամ վերափոխատավորված ձևով գործածվելը):

Հոլովածնի քարացում և այդ ձևով գործածություն ունենք նաև *գինք* բառում (*գ* նախդիր + *ինքն* դերանվան եզ. հայց. հոլով), որն ունի միայն որոշյալ հոդով կիրառություն: *Ձ* նախդիրով *ինքն* դերանվան հայցական հոլով-

¹ Այս կապակցություններից միայն *գիրաՎ տալ*-ն ու *գիրաՎ ընգնել*-ը ունեն նաև ուղղակի իմաստով գործածություն և համապատասխանաբար նշանակում են *փաթաթել* և *ակամա զարնվել*:

վածնի քարացման հետևանքով բարբառում ունենք նոր բառ, որը գործածվում է *ներքին ուժ, ինքնաքտիրապետում* նշանակություններով²:

Ձինք՝ բառը ևս գործածվում է միայն դարձվածներում՝ *զինք՝ շղղրհարել* (1. ողբալ, 2. սպառնալ), *զինք՝ ռւրան պահել*, *|| ցրոյվ տալ* (իրեն կորցնել), *զինք՝ հրվաքել* (1. ինքն իրեն տիրապետել, 2. հարստանալ), *զինք՝ տոլրոլր տալ* (նույնն է *զինք՝ շղղրհարել*), *զինք՝ կուրցընել* (ինքնատիրապետումը կորցնել) և այլն:

Խոսքային այլ միջավայրերում հանդես չեն գալիս նաև *աղնաղազ* անել, *անդծին* ընգնել, *աշ* ընգնել, *(հ)աշան* անել, *ըրամակ* ընգնել, *կակարդը* ցլվէն պըտկէն ինիլ դարձվածների ընդգծված բաղադրիչները:

Աղնաղազ բառի բացատրությունը գտնում ենք Յր. Աճառյանի կազմած գավառական բառարանում՝ «*Աղն /աղաջ-Ղրբ.* (կ'արտասանուի *ղընըղազ, աղնաղազ*) քիչ քանակությամբ աղուն (ցորեն), որ կ'աղան ջաղացքին մեջ առանց վճարի և առանց հերթի սպասելու: Աղուն և աղալ բառերէն բարդուած»³:

Աղնաղազ անել կապակցությունը բարբառում գործածվում է երկու նշանակությամբ՝ 1. տարվա ցորենից (նոր բերքից) այլուր անել՝ փորձելու համար և 2. մինչև ծաշը թեթևակի ուտել, ընդ որում երկու դեպքում էլ ունենք դարձվածային կիրառություն:

անդծին բառը «*մտատանջության հիվանդություն*»⁴ նշանակությամբ չի գործածվում, պահպանվել է միայն *անդծին* ընգնել դարձվածում, որն ունի *ծանր մտատանջության, խոհերի մեջ ընկնել* իմաստը:

Յր. Աճառյանը *աշ* ընգնել կապակցությանը տալիս է հետևյալ բացատրությունը՝ «*Մնալով հատիկը, մորթին, իւղը, պանիրը աշ են ընկել*»⁵. պատմական զարգացման հետևանքով դարձվածը կրել է իմաստային փոփոխություն, այժմ *աշ ընգնել*-ը գործածվում է *շոգել* և *հացի ծաղկելը* նշանակություններով, այսինքն նախկին իմաստը՝ *հոտելը*, մասնավորեցվել է մարդու (շոգել՝ «Մարդու հոտել») և հացի վերաբերյալ: *Աշ* բառը բարբառում պահպանվել է նաև *աշ տալ* դարձվածում, որը նշանակում է՝ 1. չորացրած մրգերը եռացրած ջրով անցկացնելուց հետո նորից չորացնել արևի տակ, 2. արևի տակ նստել, «արև» ընդունել:

Ըստ Յր. Աճառյանի գավառական բառարանի *(հ)աշան* բառը նշանակում է *կալսելու ցորեն*⁶: Բարբառում բացի *(հ)աշան անել* դարձվածից (1. խուրձը կալում ցրել՝ կալսելու համար, 2. իրերն անկարգորեն թափել, ցրել), այլ կապակցություններում հանդես չի գալիս:

Գրական հայերենի երամակ բառի հնչյունափոխված տարբերակն ունենք *(հ)ըրամակ(ք) ընգնել* դարձվածում, որը նշանակում է *մարդամեջ դուրս գալ, հասունանալ*: *Ըրմակեն* բառը, որն ի տարբերություն *(հ)ըրամակ(ք)*-ի կազմում է բառերի ազատ կապակցություններ, ևս նույն ծագումն ունի:

² Ձ նախդիրի բառակազմական գործառությունը ակնհայտ է դրսևորվել ժամանակակից հայերենում, որտեղ ունենք մեծան կարգի բառերի հարուստ քանակ՝ զարդ, ոսկեգոծ, զառամյալ, զարթուն և այլն:

Յր. Աճառյան, Գավառական բառարան, Եմինյան ազգագրական ժողովածու հրատարակությամբ Լազարյան ճեմարանի, Թիֆլիս, 1913, էջ 78:

Յր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. 1, էջ 189, 1971-1979 թթ.:

⁵ Յր. Աճառյան, Գավառական բառարան, Եմինյան ազգագրական ժողովածու հրատարակությամբ Լազարյան ճեմարանի, Թիֆլիս, 1913 թ., էջ 113:

Նույն տեղը, էջ 113:

Յր. Աճառյանը նշում է, որ կակարդ բառը գործածվում է Արաբկիրի, Պոլսի բարբառներում և *կակարչ* ձևով՝ Ակնո բարբառում և նշանակում է «թռչունի, մասնավորապես աքլորի կատար»⁷: Ղարաբաղի բարբառում հաճախակի գործածություն ունի *կակարդը ցեվքեն պըտկեն ինիլ* (ինքնավըստահ, գոռոզ լինել) դարձվածը և դատելով նրա իմաստից՝ կարելի է եզրակացնել, որ գործ ունենք նույն բառի հետ: Այդ համոզման է բերում նաև այն հանգամանքը, որ բարբառում կան նույն կաղապարով կազմվող և նման իմաստ ունեցող այլ դարձվածներ ևս՝ *քժթը յիրգինքումը ինիլ*, *քժթը յիրգինքին կալած ինիլ* և այլն:

Այսպիսով՝ *կակարդ* բառը պահպանվել է նաև մեր բարբառում *կակարդը ցեվքեն պըտկեն ինիլ* դարձվածի միջոցով:

Յր. Աճառյանի վկայությամբ *փաթ* արմատը առանձին անգործածական է՝ «փաթ - պատատել, ծրարել, փաթաթել»: Արմատ առանձին անգործածական, որից կազմված են փաթաթել (գրված նաև փաթատել) «փաթաթել, չորս կողմով ծածկել»⁸: Մեզ թվում է, որ նույն արմատն է առկա *լնզոն փաթըղնել // ընգնել* դարձվածում, որն ունի *լեզուն կապվել, կնկմալ* իմաստը:

Շէր բառը ըստ հայկազյան բառարանի նշանակում է *ծառի ոտ*⁹. *Վերան* բառի հետ համահնչունություն ստեղծելու նպատակով այն դարձել է *շերան* հետևյալ նախադասություն-դարձվածում՝ *խալխտն աշկեն շերանը տը՛սնում ա, ուրան աշկեն վերանը տը՛սնում չի*. Բարբառում ոչ *շերը*, ոչ *շերանը* խոսքային այլ միջավայրում հանդես չեն գալիս:

Միայն դարձվածներում են պահպանվել նաև մի շարք բարդություններ, որոնց բաղադրիչները, սակայն, ինչպես դարձվածային, այնպես էլ ոչ դարձվածային կապակցություններում ազատորեն հանդես են գալիս. *յըզընհավաք անել* (յեզը + իրվաքել), *վուլառնը մը՛ս* (կյուլ + առն), *պիրանան լալաքավահիր*¹⁰ *վեր ածել* (լալ+քավահիր), *մօր ծրծկանքը վեր ածել* (ծծել բառից):

Պարբայան քարացած *հօքօց-հանգուցելօց* հոլովածն ունենք մեռնելու բովանդակություն արտահայտող *հօգօց-հանգուցելօց տը՛ոնալ* դարձվածում:

Բարբառում բոլոր դեպքերում *մաքուր, մաքրվել* բառերի փոխարեն գործածում ենք *թանհուզ*, *թըմիզվիլ* բառերը: Միակ բարբառային արտահայտությունը, որտեղ հանդիպում ենք *մաքրվել* բային, *մաշվիլ-մաքրվիլ* դարձվածն է:

Ակն բառը գրական հայերենում առանձին գործածություն չունի և պահպանվել է միայն բարդություններում (անկնդետ, ակնակապիծ, ակնոց, ակնոք): Որպես բառակապակցության բաղադրիչ հանդես է գալիս *ակ* բառը տեսողության օրգան իմաստով՝ *ակը(ն) տալ* (փնտրել, ստուգել), *ակեն կենալ* (1. կարգին մնալ, 2. մաքուր կենցաղով ապրել): Բարբառում ունենք նաև ծագումնաբանական նույն հիմքն ունեցող *ակնը* բառ, որը նշանակում է *ջրի ակունք*, նաև *ըկանել* բայը ստուգել, փնտրել իմաստով:

Ինքն դերանվան բացառական հոլովածն է (*ուրան* +անա-*ուրանան*) դարձել է *ուրանան քինիլ* (ուշաթափվել) դարձվածի բաղադ-

⁷ Նույն տեղը, էջ 540:

⁸ Յր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. IV, էջ 468, 1971-1979 թթ:

⁹ Գ. Ավետիքյան, Խ. Սյուրմեյան, Մ. Ավգերյան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հատ. 2, 3-րմալ. հրատ., 1981 թ:

¹⁰ Այս բարդության առանձին բաղադրիչները գործածական են միայն գրական հայերենում:

րիչը և այդ ձևով գործածվում է միայն տվյալ դարձվածում¹¹:

Միայն դարձվածներում պահպանված մյուս բառերը բացատրել չկարողանալու և նրանց մասին տեղեկություն չիմանալու պատճառով բավարարվենք դրանք պարզապես ներկայացնելով. *կաղաղակը* քրցիկ, *փախորը* պեց անել, իրեսը *դըղլարու* կաշի, *յէրմանիմ* անել, *դուսաղ* անել, *դըռը* կտրորցնել // տալ, կըլօխը *դանգ'* անել, յեր *խըտակվել*, քարավ *քարզու* անել, *դայուղը* կտրցընել, *բըզըբազու* կ'ալ, *բըլըբանդի* պար ածել, *դաբալըղ* քըխել, *գյազ* անցկըցընել, *աթաջան* կըտրել, *հիդիդին* ծակեն հալ ածել, *դարխուզ(ս)* անել- պիրիլ, *դանգիզը* քար քըցիլ, մըթկեն *դօնը*¹² ընգնել, սըկըրհած, *բիստի քըթած*, *դըլօթը* կերած, *մըղէյիտ(դ)* կենալ, մին *պէննի կ'ուծակ* չինիլ, *ցըմըքիաթ* ինիլ, *աջալը* ծըրավել, *սուրը*¹³ վեր ածել, *լու* կենալ¹⁴:

А. Ю. САРГСЯН, Ш. М. МИНАСЯН

НЕКОТОРЫЕ КАРАБАХСКИЕ СЛОВА И ФОРМЫ СЛОВ,
КОТОРЫЕ СОХРАНИЛИСЬ ТОЛЬКО В ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ ОБОРОТАХ

Р е з ю м е

В статье представлены те карабахские слова и формы слов, которые сохранились только в фразеологических оборотах. Некоторые из них древнеармянские слова или застывшие грамматические формы, а остальные до сих пор не этимологизированы.

A. Y. SARGISIAN, CH. M. MINASIAN

SPECIAL WORDS AND WORD-FORMATIONS MAINTAINED
ONLY IN THE PHRASES IN GHARABAGH DIALECT

S u m m a r y

In this article I represent those Gharabagh words forms of the words, which preserved only in set phrases. Some of them are old Armenian words or dead grammatical forms and the vest of them are not etymologized.

¹¹ Բարբառում ունենք նաև ուրանան փոխանվանաբար գործածվող ձևը՝ ուրան իլածան կապակցության փոխարեն:

¹² «Դոն-կ'ըսուի միայն մտքին դոնը ընկնել Ղզ. Ղրբ-խորասուզուիլ խոկմանց ու մտածմանը մեջ» - Զր. Աճառյան, Գավառական բառարան, Էմինյան ազգագրական ժողովածու հրատարակությամբ Լազարյան ճեմարանի, Թիֆլիս, 1913, էջ 283:

¹³ Ըստ երևույթին ծագել է արտասուք բառից:

¹⁴ «Լու Ղրբ. միայն հետևյալ ոճերով կը գործածուիլ

- Լու կենալ - Ղրբ. թույլ տալ, մեկը հանգիստ թողուիլ: Լո՞ւ է կենում, որ ձեռքիս գործը վերջացնեմ:

-Լու կաց. Ղրբ. թող-հանգիստ թող. Լու կաց, ասեմ: Լու կաց՝ գնամ բերեմ», նույն տեղը, էջ 436: